տեղ մը կայ, ուր զառ 'ի վայր ժայռերը աստիճանաձև կտրտած հսկայաշէն թէատրոնի պէս մը կը ձևանան. հոն սահանք մը կը տեսնես, որ հազար երկուհարիւր և եօթը ոտք բարձրութենէ վար կը գահավիժի անհնարին շառաչմամբ. այն ձագառը հրաբխի բերնի ձևով է, և կը կոչուի Սերգլը տը Կավառնի: Պիւրենեանք դէպ 'ի Ովկիանոս աստիճանաբար կը ցածնան, և գագաթնին դաշտաձև մեծամեծ անտառներով զարդարուած կ'երևան. զառ 'ի վայր կողերնին այգիներով զարդարուած են, և հովիտներէն ալ անդին կը յաջորդեն բարեբեր դաշտեր:

(ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

---

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

### ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ

*Պրազիլի երկու ադամանդ :*

Այդ հատուածը հաղորդեց մեզի քաջափայլ և ազգասէր Պր. Աւետ Աղանուրը, որ Օրագրիս միջոցով հրատարակենք մեր ընթերցողացը. որով և մեր ուրիշ անգամ երևելի ադամանդներու վրայ խօսածներնուս զուարճալի յաւելուած մը կրնայ ըլլալ[1]:

*Հատուածք 'ի Գրոց Ճանապարհորդութեան 'ի ներքին Պրազիլ (յամին 1804) Յովհաննու Մաւ անգղիացւոյն, յորում խօսի զկարծեցեալ մեծ ադամանդէն որ ընծայեցաւ արքայորդի ոստիկանի երկրին, նա և զադամանդէն, որ մեծագոյն էր 'ի գանձսն յԱմերիկոյ :*

Սեաւ ափրիկեցի մի ազատ, որ բնակէր 'ի Վիլլա Տօ Բրինսիբէ, քաղաք իբր 900 մղոնաւ հեռի 'ի Ռիոյ Ժանեյրոյ, գրեաց թուղթ առ արքայորդին՝ ոստիկանն տէրութեան, ծանուցանելով նմին ունել առ իւր զադամանդ մի մեծաքանակ՝ ստացեալ ամօք յառաջ 'ի հանդուցելոյ բարեկամէն իւրմէ, և խնդրելով զհրաման նուիրելոյ զայն անձամբ առ նա ինքն արքայազնն ոստիկան: Եւ զի նկարագիր մեծութեան ականն կարի զարմացուցանէր զմիտս, գրեցաւ իսկոյն հրաման առ քաղաքապետն Վիլլա Տօ Բրինսիբէի յղել զափրիկեցին զայն 'ի Ռիոյ Ժանեյրոյ, որ և առաքեցաւ իսկ՝ ուղեկցեալ յերկուց զինուորաց: Ճանապարհայն, ամենեքեան որք լուեալն էին զհամբաւն, ողջունէին զնա յարգանօք՝ իբրև եթէ արդէն իսկ մեծարեալ իցէ պատուանշանաւ խաչի և որ անտարակոյս վարձատրիլ ունի թոշակաւ զօրապետի. և ամենեքին նախանձէին ընդ բաղդ նորին: Նոյնպէս և երկուքին զինուորքն ակն ունէին բարձի և պատուոյ հանդիպել: Յետ իբր աւուրց քսան և ութից՝ հուսկ ուրեմն ժամանէր նա 'ի մայրաքաղաքն և ածէր իսկոյն յարքունիսն: Փոքր միւս ևս և երջանկութեան նորա կատար առ դուրս հասեալ կայր. յետ վայրկեան ժամանակի յոյսն, զոր յայսքան ամաց հետէ սնուցեալն էր զիգուանօք 'ի սրտի իւրում, հաստատեալ լինելն՝ ունէր ամբառնալ զնա 'ի ստորին և յանարգ վիճակէ իւրմէ 'ի բարձր աստիճան ձոխութեան և պատուոյ:

Այսպիսի էին անտարակոյս հոգք և ակնկալութիւնքն, որք շարժէին զսիրտ նորա 'ի վարանս վայրկենին: Հուսկ ուրեմն հրաման լինէր նմա մտանել. անկեալ նորա յոտս իշխանին իբրև մատոյց զգոհարն զարմանալի, յապուշ կըրթեցաւ նա ընդ մեծութիւնն. այլ տարակոյս իմն յաջորդեաց զարմանացն: Պաշտօնեայք պալատանն սպասէին լսել զկարծիս իշխանին, և զոր միանգամ ասաց՝ զնոյն կրկնեցին և նոքին: Ադամանդն այն բոլորշի և իբր լտերբ միով ծանր՝ 'ի զարմանս գրաւէր զամենեսին զնոսա: Ոմանք, ոյք պատրաստական 'ի համարել, առաջի եդին զբիւրս բիւրուց դրամոց 'ի գին ադամանդին այնորիկ. ուր այլք 'ի ծանրութենէ բազմութեան դրամոցն անբաւականս համարեցան զանձինս 'ի թուել զնոսին:

[1] Հտ. Զ. էջ 188–221:

Որպէս զիարդ և իցէ առ հասարակ պաշտօնէիցն իշխանին այդ կարծիք էին՝ եթէ բազում միլիոնք յաւելան 'ի գանձատունն ։

Համբաւ դիպացս այսոցիկ, որ հռչակեալն էր 'ի մէջ աւագանւոյ աշխարհին, տարածեալ էր 'ի սակաւ ժամանակի առ ամենեսին ։ Զրոյցք և զարմանք հասարակաց ամենեցուն յափրիկեցին և 'ի նուէրն նորին ևեթ ուղղէին ։ Ցուցաւ ադամանդն այն նախարարացն, յորոց թէպէտ գտան ոմանք, որք երկեան և երկբայեցան իսկ եթէ այդպիսի բոլորշի և մեծ իմն նիւթոյ չիցէ մարթ լինել իսկական ադամանդ, սակայն և այնպէս առաքեցաւ այն 'ի գանձատունն՝ ընդ պահպանութեամբ զինուորաց, և եդաւ 'ի սենեկին գոհարաց ։

Յերկրորդում աւուր՝ կոմսն Լինհարէս կոչեաց զիս առ իւր, և պատմեաց զամենայն անցսն, զորս լուեալն էր զգոհարէն զայնմանէ երևելւոյ, յաւելով ապա դաշն ձայնիւ զկասկած իւր զիսկութենէ ադամանդին ։ Յետ բանիցս այսոցիկ՝ հրամայեաց ինձ սպասել նմին յետ սակաւ ժամուց 'ի պաշտօնատան իւրում, զի տացէ ինձ թուղթս եթէ յինքենէ և եթէ յայլոց նախարարաց՝ առ գանձապետն, որպէս զի կարասցից տեսանել զակնն պատուական և հաստատել զգին նորա ստուգիւ ։ Իմ յօժարամիտ ընդունելով զայդպիսի տենչալի առաջարկ նորա՝ պատրաստեցայ և սպասէի նմա 'ի պայմանադրեալն ժամու ։ Ընկալեալ 'ի նմանէ զկարևոր թուղթսն՝ չոգայ և մատուցի զայնոսիկ պաշտօնէի ումեմն գանձատանն ։ Զկնի անցանելոյ ընդ զանազան սենեակս, յորս, որպէս թուէրն ինձ, վաստակք անընդհատք զտեղի ունէին, ածին զիս յաւագ սենեակն, ուր իշխէր գանձապետն՝ արբանեկեալ 'ի քարտուղարաց իւրոց ։ Կալեալ նորա 'ի ձեռին զթուղթսն իմ եմուտ ընդ իս 'ի զրուցատրութիւն զականէն զայնմանէ ։ Յետ որոյ դարձեալ անցուցին զիս ընդ մէջ այլ մեծամեծ սենեկաց, ուրանօր կախեալ կային զորմոց ծիրանի և ոսկեհիւս օթոցք զարդարեալք նկարուք ։ Ի ներքսագոյն սենեկի ուրեք, ուր 'ի փախճանի ածին զմեզ, գտաք զանազան արկեղս՝ իւրաքանչիւրն 'ի նոյանէ ունելով զերիս նիգս, զորոց զբանալիս 'ի պահեստի ունէին երեք պաշտօնեայք, և ամենեցուն պարտ էր 'ի մի ժողովիլ 'ի բանալն զնոսա ։ Զմի յարկեղացս այսոցիկ բացեալ՝ տուփ մի գեղեցիկ հանաւ անտի, յորմէ էառ գանձապետն զգոհարն զայն անուանի և մեծաւ յարգութեամբ մատոյց ինձ զայն ։ Յառաջին տեսութեան անդ՝ իսկ և իսկ կորոյս նա զյարգն յաչս իմ. զի նախ քան զառնուլն 'ի ձեռս՝ հաւաստի եղէ, եթէ ոչ այլ ինչ էր այն՝ բայց եթէ ակն վանի բոլորշի ։ Տրամագիծ նորա առաւել էր քան զերկուս բթաչափս ։ Ի քննելս զայն՝ ասացի գանձապետին եթէ ոչ էր այն ադամանդ. և առ 'ի հաստատել զայն՝ առի ադամանդ մի 5 կամ 6 քռադի կշռաչափ և հատի այնու գիծ մի խոր 'ի վերայ ականն ։ Ոչ վրիպեցայ 'ի կարծիս իմ. վասն այնորիկ անդէն և անդ գրեցաւ թուղթ իմն վկայութեան՝ ցուցանելով 'ի նմին եթէ կարծեցեալն այն ադամանդ ազգ ինչ էր անարգ ական, չնչին կամ ոչինչ գնով, որում ես ինքն ստորագրեցի ։

Ոչ բազում մղոնօք հեռի 'ի հիւսիսային կողմն Ռիոյ Ալադա գետոյ՝ գընայ առուակն կոչեցեալ Աբէյոտէ, անուանի վասն մատուցանելոյն զմեծագոյն ադամանդն, որ է առ արքայորդի ոստիկանին, և որ 'ի յայտ եկն իբր երկոտասան ամօք յառաջ ։ Թէպէտ արդէն պատմեցաւ զայդմանէ համառօտաբար, սակայն և այնպէս ներեսցի ինձ յիշատակել աստ զառանձին դէպս անցից նորին՝ որպէս և պատմեցաւ ինձ յընթացս բնակութեան իմոյ 'ի Պեժուգոյ ։ Արք երեք հանճարեղք յանցաւոր գտեալ ծանու իմն վնասու՝ աքսորեցան 'ի ներքսակողմն երկրին, պատուէր ունելով 'ի վերայ մի մերձենալ և ոչ 'ի մին 'ի գլխաւոր քաղաքաց, կամ

բնակիլ 'ի մէջ բարեկիրթ ընկերութեան, սպառնալեօք պատժոյ մշտնջենաւոր բանտարգելութեան: Սարեալ այսու վճռով խստութեան յամայագոյն մասն երկրին՝ զհետ եղեն սոքա հետազօտելով 'ի խնդիր լինել նորանոր հանքաց կամ գիւտից, յոյս ինն այսպիսի ունելով՝ զի փութով կամ անագան կարասցեն այնպիսի ինչ 'ի ձեռս բերել մեծ և կարևոր, որով աւն ունիցին ընդունել զդարձ վճռոյն, միանգամայն և ստանալ զնախկին վիճակ իւրեանց 'ի մէջ ընկերութեան: Այդպիսի խորհրդօք աստանդական շրջէին 'ի սահմանն յայն, քննելով զայլ և այլ գետս նորին, առաւել քան զամս վեց այդպէս վաստակեալ՝ միշտ երկիւղալիցք յերեսաց կրկին վտանգաց, մի 'ի մարդակերաց, և երկրորդ անգամ, որ չար ևս է, յանկանելոյ 'ի ձեռս զօրականաց տէրութեանն: Հուսկ ուրեմն դէպ եղև նոցա մատչել 'ի գետն Րաքեյոէ՝ երբ այնքան նուազեալ էր 'ի ջրոց 'ի պատճառս երկարատև երաշտութեան ամին, մինչև ըստ մասին յատակի գետոյն երևել: Ընդ այն ինչ 'ի խնդիր անկեալ նոցա ոսկւոյ՝ և աչօ գտանեն ադամանդ մի գրեա թէ ունկի մի ծանրութեամբ: Սեծապէս խնդացին նոքա ընդ այս երկնատուր գիւտ, ումն զառաջինն հազիւ հազ կարացին հաւատալ. բայց քանզի աստի տագնապէր զնոսա 'ի խորհուրդս իւրեանց խաուլթիւն օրինացն որ 'ի վերայ ադամանդից, և անտի խրախոյս յորդէր նոցա յոյսն ազատութեան իւրեանց, վասն որոյ յերկմիտս լեալ՝ խորհուրդ հարցին առ քահանայ ումն, որ խրատ ետ նոցա վստահիլ յողորմած բարս տէրութեանն. 'ի նոյն և ուղեկից եղև ընդ նոսա մինչև 'ի Վիլլա Րիգա[1]. ուր և ընկալաւ վասն նոցա հրաման մտանելոյ առ քաղաքապետն: Անկեալք առ ոտս նորին՝ անդ յանձնեցին նմա զգոհարն անգին, յոր հաստատեալ էր յոյս նոցա, մանր պատմելով զդէպս անցիցն: Ի զարմանս գրաւեալ քաղաքապետին ընդ մեծութիւն ադամանդին՝ ոչ վստահացաւ 'ի վկայութիւն աչաց իւրոց, և կոչեցեալ զպաշտօնեայս իւր՝ 'ի նոցանէ խնդրէր ստուգութիւն. և նոքա բարձին իսկոյն զերկմտութիւն նորա:

Ստացեալ իշխանին այդպէս յանակնկալս այնպիսի ինն ադամանդ, քան զոր ոչ ուրեք երբէք գտաւ մեծ յԱմերիկա, կարևոր դատեցաւ կասեցուցանել զդխիստ վճիռ արանցն այնոցիկ 'ի վարձ հաւատարմութեան նոցա: Առաքեցաւ ապա գոհարն 'ի Ռիոյ Ժանեյրոյ, ուստի յղեցին նաւ մի պատերազմական հանդերձ ադամանդիւն 'ի Լիսպոնա. ընդ նմին առաքեցաւ և քահանայն վերոյիշեալ առ 'ի տալ զկարևոր ծանօթութիւնն: Ներումն շնորհեաց արքայն յանցաւորացն, և բարձ և պատիւ արժանաւոր քահանային:

[1] Այժմ կոչի Սիտատ տէ Ուրոյ Բրեդոյ:

---

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

### Պտուղ չորցնելու և պահելու կերպ:

Կոտ ունեցող պտուղներ. Պտուղները տափակ սպասի վրայ կը շարես ու հացը փռէն հանելէն ետև զասոնք կը դնես. կեռասն ու սալորի մանրահատ պտուղները մէկ անգամով կը չորնան. սալորները երկու երեք անգամ դնելու է:

Հասարակ կեռասը սպասի վրայ տարածուած կը դրուի փուռը, բայց աղնիւ տեսակը պէտք է նախ բարակ սաղի մը վրայ կարգաւ կապել, այնպէս դնել սպասին վրայ. ու քիչ մը չորնալէն ետև ոտերուն ծայրերէն բռնած դարձընել, և այսպէս քանի մը անգամ մինչև որ չորնան. ետքը ոտերուն վրայէն թօթվելով՝ պզտի պզտի կապոցներ ըրած թղթերու մէջ, այնպէս կը պահեն. գրեթէ քսան հատը մէկ կապոց:

Սալորն ալ ծիրանն ալ նոյնպէս առանց կուտերնին հանելու փուռը կը դրուին:

Բայց դեղձերը պէտք է երկուք ճեղքել և կուտերնին հանել, և սպասի վրայ շարելու ատեն ճեղքած կողմերուն վրայ դնելու է, որպէս զի շատ չքաշուին ու չամփոփուին:

Խաղողն ալ կրնայ չորցուիլ փուռը դնելով. ժողովելուն պէս մէկէն սպասի վրայ շարած դնելու է փուռը, և քսանըչորս ժամ թողլէն ետև հանելու է ու նորէն մէկէն դնելու է դարձեալ քսանըչորս ժամ: